ԱՐՓԻՆԵ ՄԵԽԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման հիմնախնդիրները տնտեսության զարգացման գրավականներից են. այդ առումով հոդվածում իրականացվել է վերլուծություն, համաձայն որի մշակվել է ձևաչափ, որտեղ ներառվել են գործարար միջավայրի բարեփոխման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում: Այդ համատեքստով իրականացվել է գնահատում, որտեղ ներառվել են մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները՝ զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակները:

ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներից մեկը ինչպես զբաղվածության, այնպես էլ տնտեսական ակտիվության մակարդակն է: Պետք է նկատել, որ գոյություն ունի որոշակի ազդեցություն բնակչության զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակների միջև, ինչպես երևում է գծապատկեր 1-ից:

2005 թվականը 2004 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի փոփոխություն չի արձանագրել, սակայն բերել է տնտեսական ակտիվության մակարդակի 1.5 տոկոս նվազեցման:

2007 թվականին 2004 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի 4.3 տոկոս նվազեցումը բերել է տնտեսական ակտիվության մակարդակի 6.9 տոկոս նվազեցման: Պետք է նկատել, որ տնտեսական ակտիվության մակարդակի անկումը եղել է ավելի էական, քան զբաղվածության մակարդակի անկումը:

2009 թվականին 2007 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի 5.1 տոկոս նվազեցումը բերել է տնտեսական ակտիվության մակարդակի 8.6 տոկոս ավելացման, զբաղվածության նվազման պատճառ է հանդիսացել ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի հետևանքով տեղի է ունեցել աշխատատեղերի էական կրճատում,վերջինս էլ հանգեցրել է գործազրկության մակարդակի ավելացման (7,0%)[1]:

---

[1] ՀՀ ԱՎԾ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010 թվական՝ «Զբաղվածություն», էջ 64, http://armstat.am/file/doc/99461553.pdf:

2016 թվականին 2009 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի 3.9 տոկոս աճը բերել է տնտեսական ակտիվության մակարդակի 3 տոկոս ավելացման, վերջինիս աճի պատճառ է հանդիսացել նույն ժամանակահատվածում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը՝ 8 ԱՄՆ դոլար:

2017 թվականին 2016 թվականի համեմատ զբաղվածության մակարդակի ավելացումը (1 տոկոս) հանգեցրել է տնտեսական ակտիվության մակարդակի 0.8 տոկոս ավելացման:

Զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակների կանխատեսման նպատակով կիրառվել է max-min մեթոդը, որը 2 ցուցանիշների դեպքում կանխատեսվող մեթոդ է:

MAX-MIN մեթոդը կիրառելու նպատակով զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակներից ընտրվել են առավելագույն և նվազագույն ցուցանիշները: Զբաղվածության մակարդակի առավելագույն արժեքը 51.9% է, նվազագույնը՝ 48.1%, իսկ տնտեսական ակտիվության մակարդակի առավելագույն արժեքը 63.4% է, իսկ նվազագույնը՝ 54.5%: Հաշվարկվել է վերջիններիս տարբերությունը, այնուհետև հարաբերությունները:

MAX-MIN մեթոդը արտացոլվել է հետևյալ բանաձևի միջոցով.

$$Y = a + bx \quad \textbf{(1)}$$

որտեղ.

Y-ը զբաղվածության մակարդակն է (%),

x-ը՝ տնտեսական ակտիվության մակարդակը (%),

a-ն հաստատուն մեծություն է (ենթակա է որոշման),

b-ն՝ փոփոխական մեծություն (ենթակա է որոշման):

Հաշվարկը կատարվել է 2004-2017թթ. կտրվածքով, և (1) հավասարումը ունեցել է հետևյալ տեսքը.

$$\mathbf{Y = 0.559 + 0.023x}$$

Այսինքն՝ a-ն՝ 0.559 կամ 55.9%, իսկ b–ն՝ 0.023 կամ 2.3%, հետևաբար՝ տնտեսական ակտիվության մակարդակի մեկ տոկոսային փոփոխությունը կարող է բերել զբաղվածության մակարդակի 2.3 տոկոսային կետի ավելացման, այսինքն՝ տնտեսական ակտիվության մակարդակի հետագա բարձրացումը կբերի բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման:



Գծապատկեր 1. **2004-2017թթ. զբաղվածության, տնտեսական ակտիվության մակարդակների շարժընթացը ՀՀ–ում (%)**[1]

Տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակների միջև փոխկապակցվածությունը բացահայտելու նպատակով իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, որտեղ տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակները ներկայացվել են հետևյալ բանաձևի հիման վրա.

$$Y = a_0 + a_1 * Em + \varepsilon_t \quad (2)$$

որտեղ

Y –ը տնտեսական ակտիվության մակարդակն է,

Em– ը զբաղվածության մակարդակն է,

(a_0,a_1,)–ը հաստատուն մեծության և փոփոխականի էլաստիկության գործակիցներն են,

ε_t –ն պատահական սխալի մեծությունն է:

Վերլուծության համար դիտարկվել են 2004-2017թթ. ընդգրկող ժամանակահատվածի տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակների պաշտոնական վիճակագրական տարեկան տվյալները:

---

[1] ՀՀ ԱՎԾ , Հայաստանի վիճակագրական Տարեգրքեր 2006թ.,2010թ.,2015թ.,2017թ., «Զբաղվածություն», էջեր 50, 52,57,51 (http://armstat.am/file/doc/99461553.pdf) , (http://armstat.am/file/doc/99493603.pdf),(http://armstat.am/file/doc/99504348.pdf): Հրապարակումներ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-օգոստոսին» (http://armstat.am/file/article/sv_08_17a_141.pdf):

Աղյուսակ 1

2004-2015թթ. զբաղվածության, տնտեսական ակտիվության մակարդակների շարժընթացը ՀՀ–ում (%)[1]

	Զբաղվածության մակարդակ	Տնտեսական ակտիվության մակարդակ	Զբաղվածության մակարդակ (Log)	Տնտեսական ակտի-վության մակարդակ (Log)
2004	53	58.6	3.970292	4.070735
2005	53	57.7	3.970292	4.055257
2006	51.7	55.9	3.945458	4.023564
2007	50.7	54.5	3.925926	3.998201
2008	49.8	59.5	3.908015	4.085976
2009	48.1	59.2	3.873282	4.080922
2010	49.6	61.2	3.903991	4.114147
2011	51.4	63	3.939638	4.143135
2012	51.9	62.7	3.949319	4.138361
2013	53.2	63.4	3.974058	4.149464
2014	52	63.1	3.951244	4.144721
2015	50.9	62.5	3.929863	4.135167
2016	50.3	61.6	3.918005	4.120662
2017	50.5	61.5	3.921973	4.119037

2-րդ ռեգրեսիոն հավասարումը գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eviews 9[2]՝ ելնելով համակարգչային ծրագրային հնարավորությունից, սակայն մինչ այդ հավասարումը գնահատելը անհրաժեշտ է տվյալները համահարթեցնել: Ուստի այդ նպատակով

[1] ՀՀ ԱՎԾ , Հայաստանի վիճակագրական Տարեգրքեր 2006թ., 2010թ., 2015թ., 2017թ., «Զբաղվածություն», էջեր 50, 52,57,51 (http://armstat.am/file/doc/99461553.pdf) , (http://armstat.am/file/doc/99493603.pdf),(http://armstat.am/file/doc/99504348.pdf): Հրապարակումներ՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»՝ ՄԱՄ1 Հայաստան.Տնտեսական աճը, աղքատությունը և աշխատանքի շուկայի զարգացումները 2004-2008թթ.,2008-2013թթ.,2012-2017թթ., էջեր 28,31,33 http://www.armstat.am/file/article/poverty_2009_2.pdf , http://armstat.am/file/article/5.poverty_2014a_2.pdf :

[2] Eviews-ը Micro TSPփաթեթի Windows տարբերակն է, որը պարունակում է զարգացած «հուշում» (help),որն, ըստ էության,էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է: Eviews- ի մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ էլ.հասցեում՝http://www.eviews.com/ :

տվյալները լոգարիթմել ենք որպես աղյուսակ 1՝ որպեսզի խուսափենք կեղծ կոռելյացիոն կապ ստանալուց:

Աղյուսակ 2

Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն մեծությունները[1]

	Տնտեսական ակտիվության մակարդակ	Զբաղվածության մակարդակ
Տնտեսական ակտիվության մակարդակ	1	
Զբաղվածության մակարդակ	0.701427	1

Ընտրված ցուցանիշների հիման վրա իրականացված կոռելյացիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց միջև իրոք գոյություն ունի նշանակալից դրական կոռելյացիա: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 2-ի տվյալները, տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակների միջև գոյություն ունի նշանակալից դրական կոռելյացիա՝ 0.70: Ուստի իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքները հաստատում են, որ դիտարկվող գործոնների միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն:

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՐՓԻՆԵ ՄԵԽԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ակտիվության մակարդակի հետագա բարձրացումը կարող է բերել բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, զբաղվածության մակարդակի ավելացման, աղքատության մակարդակի կրճատման, և դրանով իսկ կբարձրանա բնակչության կենսամակարդակը: Վերջինիս մակարդակի բարձրացումն էլ խթան կհանդիսանա օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, որն էլ կբերի գործարար միջավայրի զարգացման:

[1] Հաշվարկվել է հեղինակի կողմից:

Բանալի բառեր. *գործարար միջավայր, մակրոտնտեսական ցուցանիշ, բնակչության կենսամակարդակ, զբաղվածության մակարդակ, տնտեսական ակտիվության մակարդակ, MAX-MIN մեթոդ:*

СПОСОБЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ СОЦИАЛЬНЫМИ И ЭКОНОМИЧЕСКИМИ ПРОЦЕССАМИ В КОНТЕКСТЕ ПРИОРИТЕТОВ ДЕЛОВОЙ СРЕДЫ АРМЕНИИ

АРПИНЕ МЕХАКОВНА КЮРЕГЯАН
соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация: Повышение уровня экономической активности в Республике Армения может привести к решению социально-экономических проблем населения, повышению уровня занятости и снижению уровня бедности, тем самым поднимая уровень жизни населения. Это приведет к стимулированию привлечения иностранных инвестиций, что в свою очередь будет способствовать развитию бизнес-среды.

Ключевые слова: *бизнес-среда, макроэкономический показатель, уровень жизни населения, уровень занятости, уровень экономической активности, метод MAX-MIN.*

APPROACHES TO INCREASING THE EFFICACY OF MANAGEMENT OF SOCIOECONOMIC PROCESSES IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF PRIORITIES FOR REFORMING THE BUSINESS ENVIRONMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

ARPINE MEKHAK KYUREGHYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract: Further increase of the level of economic activity in the Republic of Armenia could lead to addressing of the socioeconomic issues of the population, the increase in employment, poverty reduction, thus raising the living standards. The rising standard of living would stimulate the attraction of foreign investments, resulting in more business-friendly environment.

Keywords: *Business environment, macroeconomic indicator, standards of living of the population, employment level, level of economic activity, the MAX-MIN method.*